ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 05

գ. Նուռնուս 11 հուլիսի 2025թ.

2025 թվականի հուլիսի 11-ին, ժամը 18.00-ին, ՀՀ Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի Նուռնուս բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրում (հասցեն՝ գ. Նուռնուս Գլխավոր փողոց 15 վարչական շենք) կայացավ «ՊԵՐԵՎՈՌՉԻԿ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված՝ Բյուրեղավան համայնքի Նուռնուս բնակավայրում գտնվող հողամասի տարածքում Նուռնուսի բազալտների հանքավայրում արդյունահանման թույլտվություն ստանալու համար հանրային քննարկումների 1-ին փուլը:

Մասնակցում էին՝

«ՊԵՐԵՎՈՌՉԻԿ» ՍՊԸ-ի տնօրեն Գևորգ Աթոյանը, ՍՊԸ-ի ներկայացուցիչ Շահեն Խաչատրյանը , Նուռնուսի վարչական ղեկավար Աղվան Հարությունյանը, , Բյուրեղավանի համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ Սարգիս Ղազարյանը, աշխատակազմի երկրորդ կարգի մասնագետ Հասմիկ Սիմոնյանը և Նուռնուս բնակավայրի բնակիչներ (մասնակիցների ցուցակը կցվում է):

Օրակարգում՝

1. Նուռնուսի բազալտների հանքավայրում արդյունահանման թույլտվություն ստանալու համար հանրային քննարկումների 1-ին փուլ:

Լսեցին՝ բացման խոսքով հանդես եկավ Նուռնուսի վարչական ղեկավար Ա. Հարությունյանը: Նա նշեց, որ «ՊԵՐԵՎՈՌՉԻԿ» ՍՊԸ-ն հայտ է ներկայացրել Նուռնուսի բազալտների հանքավայրում արդյունահանման աշխատանքներ իրականացնելու թույլտվություն ստանալու համար:

Այնուհետև խոսքը տրամադրվեց «ՊԵՐԵՎՈՌՉԻԿ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ, նախագծի հեղինակ և կատարող Շահեն Խաչատրյանին: Վերջինս նշեց, որ 1987-1988 թվականներին ընդերքի վարչությունը Նուռնուսի տարածքում իրականացրել է երկրաբանական հետախուզական աշխատանքներ և հայտնաբերել բազալտի պաշարներ, ընկերությունը ցանկանում է այդ տեղամասում իրականացնել արդյունահանման աշխատանքներ:

Եղան քննարկումներ բնակավայրի բնակիչների և ընկերության ներկայացուցիչների միջև, որի արդյունքում բնակիչները միաձայն մերժեցին հանքավայրում արդյունահանման թույլտվություն ստանալու վերաբերյալ հայտը:

Քննարկումների պատասխանատու և վարող

Նուռնուսի վարչական ղեկավար՝ Ա. Հարությունյան